

Ամենայն ոք իւր կարողութեան չափ տալով՝ մի պատուական և արժանաւոր ժողովուրդ կազատէ թշուառութիւնից և կործանումից: Տուէք, և ազուլեցին կրկնապատիկը կը հատուցանէ երբ իւր թշուառութեան արտասուքը սրբուած կը լինի:

Վ. Ա. Ն. Ի. Յ.

Խճագրոս-Լիւն Արարատ ամագրոյ.

Վերաշինութեան ժամանակի մէջ եմք.

Յորմէ հետէ իւր հայրենասիրութիւնով ազգին հանրածանօթ եղող Ս. Հայրիկն Վանի առաջնորդութիւնը թողեց և քաղաքագիտական հմտութիւններով օժտեալ Գեր. Պօղոս Արքազանն առաջնորդական կնճռալիր պաշտօնը վարել սկսած է: մեր ուսումնարաններն զգալի առաջագիմութիւններ կրնեն: Ինչպէս Ս. Հայրիկի պաշտօնէութեան միջոցին, նոյնպէս այժմու աչալուրջ Առաջնորդի փութաջանութիւնով նորընտիր Գաւ. Աւս. յանձնաժողովն իւր ջանքերն առաջ կրտանէ: Արդէն քանիմ՝ ամիսներ առաջ սոյն յանձնախումբն՝ Ընդ. ուսումնարանների համար մեր Ասուցչական խմբին խմբագրել տուաւ ծրագիր մը, որը յատկապէս իւր գնահատութեանն արժանացաւ: Արպէս գիտեմ, յոյս կայ թէ ի մօտոյ պիտի յանձնուին իւրաքանչիւր ուսումնարաններին մէկ մէկ հատ՝ սոյն ծրագրին տպագիր օրինակներէն:

Մեր ուսումնարաններէն մեծ մասն՝ իրենց յառաջգիմասէր ուսուցիչներին ջանադրութիւնով արդի մեթոդին հետեւած լինելով՝ տրամադիր են սոյն ծրագրին համեմատ սահմանեալ արդիւնքն արտագրել: Պ. Յովնանեանի նոր բացած Մանկավարժական դրոյրանոցն՝ լիայոյս կրնէ զմեզ: Սա իւր ուղղութիւնով հսկայական քայլեր կը խոստանայ, որի քաջալերութեան մասին կը յուսամք թէ պատուարժան խմբագրութիւնդ կը ջանայ ռուսիարնակ մանկավարժ Հայ խմբագիրներին հրաւիրել, որ իրենց թերթերէն մի մի օրինակ յլեն իւր Մանկավարժանոցին: Նոյնպէս Արարքի՝ Նորաշէնի, Պօղոսեան վարժարանի, որբանոցի և Պ. Բարազամեանի ուսումնարաններն մեծ յոյսեր կրտածեն:

Արարք եկեղեցին՝ որ իւր բազմամարդ տուներով մեր եկեղեցիներէն ամենէն հանրածանօթն է, շնորհիւ Գեր. Պօղոս Արքազ-

նին՝ նորոգուելու և ընդլայնուելու հրամանն ստացաւ երէկ քաղապետութեան ատեանէն: Գործողութիւններն արդէն սկսած էին: Եկեղեցին քարուքանդ եղած էր ութ օր առաջ, և ժողովուրդ՝ բարեպաշտական եռանդով նորա փլատակին մէջ նոյն խկ՝ առարկինական գործ մը կատարելու կը յաջողի: Աոյն եկեղեցիի վերանորոգութիւնն՝ իբր թէ լինէր ընդ գործ մը, վերաշինութիւնն՝ բոլոր Վանեցիներին համակրելի է:

Սրտեր կը միանան, զգացումներն զիրար կը գիրկընդխառնեն, Ամենուրեք միօրինակ խօսակցութեան նիւթ կը տեսնէք. — Արարք եկեղեցիի վերանորոգութիւն, և Սրբազան Առաջնորդի փութաջան արիւթիւնը: Ամեն մարդ գոհ է այժմ իւր առաջնորդին արդարասիրութենէն: Համակրական ցոյցեր՝ գէպի առաջնորդարանական վարչութիւնը հանրային կամ ժողովրդային է: Ժողովուրդ և աղաները կը սիրեն միեւնոյն տպաւորութիւններով Պօղոս Սրբազանն: Այ որ հակախրիմեան և հակապօղոսեան է. և լրջմտութիւնը կը թելադրէ մեզ սիրել թէ առաջինն և թէ վերջինն՝ իւրաքանչիւրն իւր տաղանդովն:

Աւելորդ չէ յիշել Պօղոս Սրբազանի ժրջան գործունէութիւններն՝ իւր վարչական ազդեցութիւններուն ներքեւ: Ամեն օր և ամեն բույէ առաջնորդարանին սրահն լի է խուռն բողոքարկուներով, որոց մէջ կը գտնուին նաև թիւրք և քիւրա՝ հակառակ իրենց հնապաշտական ամբարհաւածութեան: Անձանձիր կըլսէ բողոքներն, կը լուծէ ամեն կնճիռ: Իւր ազդեցութիւնն աներկբայելի է Քաւ. իշխանութեան շրջանակի մէջ և՞ ամենուրեք: Այ որ ձեռնուայն ետ չը գառնար: Ժողովուրդ Քաւ. իշխանութեան անխիղճ ճանկին մէջ մինչև ոսկորը փետտուելով, իհարկէ անհուն երախտագիտութիւն պէտք է սնուցանէ գէպի այս արգարագատ վարչութիւնն՝ որի առաջնորդող զեկն կըլարէ Գիւր. Պօղոս Սրբազանն:

Գրասէր:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՀՈԳ. ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ.

Ստացանք Վաղարշապատի օրիորդական Հոգ. գպրոցի Ինամակալու հուշ ի հրատարակութիւն սոյն տեղեկագիրը, որ խնամակալ Տիկինը ներկայացրել է հասարակական ժողովին: